

**ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

Ստորև ներկայացված են ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառվող ապահովագրական հատուցումների հաշվարկման օրինակներ, բացատրություններ: Ինչպես գիտենք ԱՊՊԱ-ի գծով ապահովագրական գումարի առավելագույն մեծություններն են՝

1. անձնական վնասների դեպքում՝

- Մեկ պատահարով բոլոր տուժողների համար 33 մլն. ՀՀ դրամ,
- Մեկ պատահարով մեկ տուժողի համար՝ 3.3 մլն. ՀՀ դրամ,

2. գույքային վնասների դեպքում՝

- Մեկ պատահարով բոլոր տուժողների համար 18 մլն. ՀՀ դրամ,
- Մեկ պատահարով մեկ տուժողի համար՝ 1.8 մլն. ՀՀ դրամ,

Անկախ այն հանգամանքից, թե որքան են կազմում ավտովթարի հետևանքով տուժողին պատճառված անձնական և գույքային բնույթի վնասները՝ տուժողին հատուցում կարող է տրվել ոչ ավել, քան ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարը:

Այն դեպքում, երբ վնասներ են կրել մեկից ավելի անձինք, ու այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված ապահովագրական գումարը, ապա տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են նրանց պատճառված անձնական կամ գույքային վնասների չափերին համամասնորեն, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարի չափը:

Օրինակ՝

Ենթադրենք տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով վնասվել է 6 ավտոմեքենա՝ ներառյալ մեղավոր վարորդի ավտոմեքենան: Մեղավորություն չունեցող մյուս 5 վարորդների մեքենաների վնասի չափերն են՝

1. 6 700 000 մլն. դրամ
2. 5 300 000 մլն. դրամ
3. 4 200 000 մլն. դրամ
4. 3 300 000 մլն. դրամ
5. 2 700 000 մլն. դրամ

Ընդհանուր վնասը կազմել է 22 200 000 դրամ: Քանի որ մեկ ավտովթարի հետևանքով գույքային վնասների համար ապահովագրական հատուցման առավելագույն գումարը սահմանված է 18 000 000 ՀՀ դրամ, ապա միայն այդքան գումարի սահմաններում կարող է կատարվել հատուցում:

Հաշվարկենք յուրաքանչյուր տուժողին պատճառված վնասի չափի տեսակարար կշիռը վնասի ընդհանուր գումարի մեջ՝

- 1-ին մեքենայի տեսակարար կշիռը 30 % է ($6\,700\,000/22\,200\,000 \cdot 100\%$),
- 2-րդ մեքենայի տեսակարար կշիռը 24 % է ($5\,300\,000/22\,200\,000 \cdot 100\%$),
- 3-րդ մեքենայի տեսակարար կշիռը 19 % է ($4\,200\,000/22\,200\,000 \cdot 100\%$),
- 4-րդ մեքենայի տեսակարար կշիռը 15 % է ($3\,300\,000/22\,200\,000 \cdot 100\%$),

5-րդ մեքենայի տեսակարար կշիռը 12 % է ($2\,700\,000/22\,200\,000 \cdot 100\%$),

Յուրաքանչյուր տուժողին վճարվող ապահովագրական հատուցման չափը համապատասխանաբար կկազմի՝

1-ին մեքենա՝ 5 400 000 ՀՀ դրամ ($18\,000\,000 \cdot 30\%$),

2-րդ մեքենա՝ 4 320 000 ՀՀ դրամ ($18\,000\,000 \cdot 24\%$),

3-րդ մեքենա՝ 3 420 000 ՀՀ դրամ ($18\,000\,000 \cdot 19\%$),

4-րդ մեքենա՝ 2 700 000 ՀՀ դրամ ($18\,000\,000 \cdot 15\%$),

5-րդ մեքենա՝ 2 160 000 ՀՀ դրամ ($18\,000\,000 \cdot 12\%$),